Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
24 հուլիսի 2024 թվականի N 278 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հուլիսի 26–ից

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ կայքից ստացվող քաղվածքների և տեղեկանքների պատվիրման արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 26.07.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քաղվածք՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից բացված հաշվի, քարտի, ավանդի և/կամ վարկի վերաբերյալ քաղվածք, որը պատվիրվում է www.idbank.am կայքի միջոցով:
1.3 **Տեղեկանք՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից հաշվի, քարտի, ավանդի և/կամ վարկի վերաբերյալ տեղեկանք, որը պատվիրվում է www.idbank.am կայքի միջոցով:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 26.07.2024թ-ից 31.08.2024թ-ը ներառյալ www.idbank.am կայքի միջոցով պատվիրված Քաղվածքները և Տեղեկանքները կտրամադրվեն առանց սպասարկման վճարի: 01.09.2024թ-ից մինչև 31.12.2024թ-ը ներառյալ www.idbank.am կայքի միջոցով պատվիրված Քաղվածքների համար կգործի Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարներից 20% զեղչ:

2.2 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: